

ԱՐԹՈՒՐ ԷԴԱՐ

«ԶԱՔԵՈՍ»

(Դրամատիկական երկ աստվածաշնչյան թեմայով)

Գործող անձինք

ԶԱՔԵՈՍ

ԶԱՔԵՈՍԻ ԿԻՆԸ

ԶԱՔԵՈՍԻ ԿՆՈՋ ՔՈՒՅՐԸ

Ա ՔԱՂԱՔԱՅԻ

Բ ՔԱՂԱՔԱՅԻ

Գ ՔԱՂԱՔԱՅԻ

Ա ԿՈՒՅՐ

Բ ԿՈՒՅՐ

ԵՐԻՔՈՎԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ

ՀԻՍՈՒՍ

ՏԱՄՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Զաքեոսի տունը:

Զաքեոսի կինը սեղան է գցում: Սրբիչով սրբվելով ներս է մտնում Զաքեոսը և տեղավորվում սեղանի շուրջ:

ԶԱՔԵՈՍ - (Գոհունակությամբ): Ա՛յ, ապրես: Ա՛յ, կին եմ ասել:

ԿԻՆԸ - (Թերահավատորեն): Հավատացո՛ղ...

ԶԱՔԵՈՍ - Ճիշտ էլ անում ես (Սրբիչը կնոջը տալով): Բա աղն ո՞ւր է...

ԿԻՆԸ - Սեղանի՛ն է, ո՞ւր է:

ԶԱՔԵՈՍ - Բա ես ընչի՞նչ եմ տեսնում:

ԿԻՆԸ - (Զննելով սեղանը): Հա, ճիշտ ես ասում: Հիմա կբերեմ (Գնում է):

ԶԱՔԵՈՍ - (Ինքն իրեն): Տեսնես պտի լինի՞ մի օր, որ հաց դնելուց աղը չմոռանաս...

ԿԻՆԸ - (Աղը բերելով): Հը՞, բան ե՞ս ասում...

ԶԱՔԵՈՍ - (Ներվայնանալով): Ասում եմ էսքան տարվա մարդ ու կնիկ ենք, մի օր չտեսա՛, որ դու, սեղանին, հացի հետ ա՛ղն էլ դնես:

ԿԻՆԸ - (Աղը դնելով ամուսնու դիմացը): Ըհը՛, Ձաքեոս, էս էլ քո ա՛ղը:

ԶԱՔԵՈՍ - (Նմանակելով): Ըհը՛, Ձաքեոս, էս էլ քո ա՛ղը (Աղամանն իր դիմացից կողքի դնելով): Էդ սովորությիդ վերջը պիտի տա՞ս...

ԿԻՆԸ - Քեզ էլ առիթ էր պետք, որ վրաս խոսես, չէ՞: Էդ մի պտղուց աղն ի՞նչ է, որ դրա համար դու ամեն անգամ իմ ներվերն ես քայքայում:

ԶԱՔԵՈՍ - Մի պտղուց աղի՞...

ԿԻՆ - Հա՛: Հենց մի պտղուց աղի՛... Աշխարհը մի կողմ, քո ուտելն ու քնելը մի՛: Էլ ուրիշ դարդ ու ցավ չունեմ, էլի՛...

ԶԱՔԵՈՍ - Չհասկացա, դու էլ ե՞ս դարդ ու ցավից խոսում:

ԿԻՆԸ – Իսկ ինչու պիտի չխոսե՞մ որ: Թագավորի կի՞ն եմ, ի՞նչ է:

ԶԱՔԵՈՍ - Թագավորի չէ, բայց մաքսատան պետի կին ես, դա քիչ է՞ քեզ համար: Քեզ քիչ է՞, որ էդքան փող ու ապրանք եմ բերում լցնում էս տունը: Բա, մի հլը կողք ու բոլորդ նայի, քեզ նման ընտիր, ըստ պահանջի ապրող մեկը կա՞...

ԿԻՆԸ - Դու էլ մա՛րդ գտար համեմատվելու համար: Ես ինձ էս (կողք ու բոլորը ցույց տալով) ռամիկների հետ ե՞մ համեմատելու:

ԶԱՔԵՈՍ - (Հեգնական): Չէ՛, ո՞նց կլինի: Դու պալատներում, ապարանքներում մեծացած ազնվատոհմ աղջիկ, նրանք հյուղականներում ծնված ռամիկ մարդիկ... Տո, ամո՛թ է, ամո՛թ... Քեզ

որ առա, վրադ նույնիսկ մի կարգին շո՛ր էլ չունեիր, որ հարսանիքի օրը հագո գցեիր: Օժիտի տեղն էլ էն մարդաթող քրոջդ բերիր ու պու-պու նստեցրիր հյուրասենյակի մեջտեղը...

ԿԻՆԸ - Ջաքեո՛ւ, խնդրո՛ւմ եմ, քրոջս չկանե՛ս:

ԶԱՔԵՈՍ - Տո, մի հարցնող լինի՝ էդ անտեր գործի տեղը որ էդքան գոփում ու թալանում ենք, էդ փողը տեսնես ո՞ւր ենք տանում, ո՞ւր: Բա տո՛ւն չենք բերո՞ւմ, բա ձե՛զ համար չի՞...

ԿԻՆԸ - Պա՛հ, պա՛հ, ինչ էլ բառեր ես քեզնից մոգոնո՞ւմ... Գոփե՛լ, թալանե՛լ... (Վրան հարձակվելով): Էս անշուք տունն է՞, հա՞, քո թալանը, որ առել ու անցել ես՝ գոփո՛ւմ ենք, թալանո՛ւմ ենք: Չէ՛, դու ինձ ասա՛, բա ամոթ չի՞, որ մեզ պես մարդիկ է՛ս տեսակ տան մեջ ապրեն: Բա մի կարգին տուն չես կարո՞ղ սարքես...

ԶԱՔԵՈՍ - Թող հա՛ց ուտեմ:

ԿԻՆԸ - Հացը չի՛ փախչի, իսկ նոր տուն մեզ պե՛տք է...

ԶԱՔԵՈՍ - Չհասկացա, էլի տնացավդ բռնե՞ց: Հենց նստում եմ հացի, դու սկսում ես տնից գանգատվել:

ԿԻՆԸ - Թե չէ, էլ ե՞րբ ժամանակ գտնեմ քեզ հետ խոսելու: Ամբողջ օրը դո՛ւրսն ես, տուն էլ որ գալիս ես, պիտի հաց ուտես ու քնես: Ե՞րբ խոսեմ քեզ հետ, քնած ժամանա՞կ:

ԶԱՔԵՈՍ - Ա՛յ, էդ մեկը լավ ասիր: Սպասի հացս ուտեմ-պրծնեմ, կպառկեմ, այ էն ժամանակ սիրտդ ինչքան կուզի դո՛ւրս տուր:

ԿԻՆԸ - Քո արևին տղամարդ ես, էլի՛: Մի քանի կոպեկ տուն ես բերում՝ ծովը ծնկներիցդ է, էլի՛...

ԶԱՔԵՈՍ - Հոգուդ մեղք մի՛ արա, ա՛յ կնիկ: Էնքան փող, որ ե՛ս եմ աշխատում, քաղաքում էլ ուրիշ մեկը չկա՛, որ աշխատի:

ԿԻՆ - Է, մե՞ջն ինչ կա: Քո ենթակաները քեզնից լա՛վ են ապրում: Մի նրանց ապրելուն էլ նայի, մերն էլ:

ԶԱՔԵՈՍ - Տո, ա՛յ կնիկ, դու վերջը պիտի հասկանա՞ս, որ ես ես գործին նստելու համար մի փեշ փո՛ղ եմ տվել:

ԿԻՆԸ - Է, չտայի՛ր...

ԶԱՔԵՈՍ - Կա՛րգն է էդպես, հո ինձանով չի՞: Իբր թե չե՛ս իմանում, որ էսօրվա օրը առանց փողի մարդը մարդուն բարն՛ էլ չի տալիս:

ԿԻՆԸ - Ասենք թե գիտեմ, հետո՞ ինչ: Էս մի տարի է մաքսատան պե՛տ ես՝ էդ փողը չհանեցի՞ր...

ԶԱՔԵՈՍ - Հանե՛լ եմ: Ո՞վ ասես չեմ հանել: Ես իմ տվածի քառակի՛ն եմ աշխատել, սակայն էդ մասին վերևում չգիտեն: Իրենք իրենց «հախի» տերն են ու մեզ չեն հսկում: Բայց որ, հենց էգուց, հող գնեմ ու սկսեմ մի չնաշխարհիկ տո՛ւն կառուցել, սրանք իսկույն գլխի՛ կընկնեն, որ ես իրենց իմացածից շատ ավելին եմ թալանում: Ու գիտե՞ս չե՞, թե ինչ կլինի...

ԿԻՆԸ - Քեզ գործից կհանե՛ն:

ԶԱՔԵՈՍ - Չե՛: «Հախը» կբարձրանա: Կրկնակի՛: Եռակի՛: Հասկացա՞ր հիմա: Էնպես որ, թող մի երեք-չորս տարի լավ դիզե՛նք, հավաքե՛նք, այ հետո խնդրեմ, ինչ մտքիցդ անցնի, բերանդ չբացած, բերեմ ու լցնեմ հենց ոտքերիդ տակ...

ԿԻՆԸ - Է՛, հոգնե՛լ եմ, Չաքեոս, հոգնե՛լ...

ԶԱՔԵՈՍ - (Չարմացած): Ինչի՞ց...

ԿԻՆԸ - Սպասելո՛ւց: Էդ քո ասած լավ կյանքին սպասելուց: Քանի դեռ մաքսատան հասարակ աշխատող էիր, ասում էիր բաժնի վարիչ դառնամ՝ լա՛վ կապրենք: Վարիչ դարձար, թե՛ սպասեք պետ նստեմ, այ էն ժամանակ լա՛վ կտոժանք: Է՛, հիմի էլ պե՛տ ես: Բայց էլի ասում ես սպասեք... Էլ ինչի՞ն սպասենք, Չաքեոս, ինչի՞ն: (Կտրուկ): Բերող լցնո՞ղ ես, է՛, հիմա՛ բեր լից: Թե չե՛ երեք-չորս տարի... Երեխեքդ ես խոնավ պատերի մեջ ցավի տեր կդառնան, հեչ մտածե՛լ ես էս մասին: Գոնե մի թեթև վերանորոգեինք...

ԶԱՔԵՈՍ - Բան էլ չի՛ լինի: Կդիմանա՛ն: (Կատակելով): Ասա, էն խեղճ քույրդ հանկարծ չորրբոսնի...

ԿԻՆ - Է՛, անհամ մարդ ես...

ԶԱՔԵՈՍ - Բա որ ամեն օր աղը մոռանաս, ի՞նչ պիտի լինեմ:

ԿԻՆ - Դու խոսքը իզուր կտուր մի՛ գցի... Երեխեքը մեծանո՛ւմ են, ծախսերը՝ շատանո՛ւմ: Մեզ փո՛ղ է պետք, փո՛ղ: Աչքդ չթարթած՝ տեսար մեծացան: Ուսման տա՛լ է պետք: Ամուսնացնե՛լ է պետք: Ի՞նչ ենք անելու, հը՞, էլի սպասելու ե՞նք... Բա որ հա երեսովս ես տալիս «օժիտդ», «օժիտդ», բա չես մտածո՞ւմ, որ երկու աղջիկ էլ դու՛ ունես: Էգուց, մյուս օրը նրանց ի՞նչ պատասխան ես տալու:

ԶԱՔԵՈՍ - (Հոգու հետ խաղալով): Իբր դու, որ օժիտ չունեիր, վատ բախտի արժանացա՞ր:

ԿԻՆԸ - (Նույն տոնով): Ո՛նց կլինեք... Բա քեզ նման գոփող ու բերող ամուսին էլ որտեղի՞ց գտնենք:

ԶԱՔԵՈՍ - Վայ քո տունը չքանդվի, կնիկ, փեսացուները հո աշխարհիս երեսից չվերացա՞ն... Մատս կտտացնեմ, մի դաստա փեսա՛ էստեղ հավաքվի:

ԿԻՆԸ - Դու էլ հո չասի՛ր: Կողք ու բոլորի էս աղքատները՝... Մտքո՛վդ չանցնի: Իմ աղջիկներին պիտի հարուստ ու ապահովված մարդկանց տամ:

ԶԱՔԵՈՍ - Իբր գո՛ւտ արիր: Բա ամոթ չի՞, որ Զաքեոսի նման մեծահարուստ մարդն իր աղջիկներին աղքատի՛ հետ պսակի:

ԿԻՆ - Ա՛յ, ապրե՛ս... Հարուստ մարդու համար էլ հարուստ օժիտ է պետք:

ԶԱՔԵՈՍ - Տո, ա՛յ կնիկ, բա էդքան շորն ու ապրանքը, որ լցրել ու փակել էս էն վերևի սենյակում, հերիք չի՞:

ԿԻՆ - Քի՛չ է, Զաքեոս, քի՛չ: Ես էն տեսակ օժի՛տ եմ տալու իմ աղջիկներին, որ ամբողջ քաղա՛քը զարմանա ու մի տարի խոսի՛ էդ մասին:

ԶԱՔԵՈՍ - (Նեղն ընկած): Հա՛, բայց մինչև երեխեքը մեծանան՝ ցեցն ախր կուտի էդ շորերն ու ապրանքը...

ԿԻՆԸ – Ցեցը կուտի, նո՛րը կառնենք: Էդ ձեր շրջապատով որ քի՛չ քաշ գաք, մի քիչ քի՛չ ուտեք-խմեք ու ընկնեք էն կապը կտրածների հետ, փողերդ տե՛ղը կգան- կառնեն:

ԶԱՔԵՈՍ - Է՛, հազա՛ր եմ ասել, խելքդ որ չի հասնում, լավ է չխոսե՛ս: Շրջապատ ասածդ էս քաղաքի լավ տղե՛քն են, կնիկ: Ամեն մեկը մի գործի տեր, մի պետ, մի կառավարիչ: Ոնց որ ե՛ս, հա՛... Ու բոլորս մեկս-մյուսիս «նայելով» ենք ապրում: Բա որ ես լավ «չնայեմ» դատախազին, նա իմ դեմ ուղղված գանգատների վրա աչք կփակի՞: Չի՛ փակի: Ու որ չփակի, ես էլ ի՛մ հերթին, աչք կփակե՞մ իր բերած մաքսանենգ ապրանքին: Իհա՛րկե՛ չէ: Ու էսպես մի շարան, մինչև... Բա՛, թե չէ գիտես սիրտս վա՞րդ էր պատռում, որ էն դատավորի դեբիլ տղի հարսանիքին ադամանդից մատանի նվեր տարանք: Բա ափսոս չե՞ր, հը՞: Թանկ ու կրակ էլ տվինք ու առանք: Բայց ի՞նչ՝ շան ու գիլու բաժին դառավ: Քո կարծիքով սիրտս չի ցավո՞ւմ դրա համար: Բայց թե ի՞նչ անենք, էգուց էլ իրե՛նք մեր տղին ու աղջիկներին կբերեն: Իրենց սի՛րտն էլ կցավի, բայց կբերեն...

ԿԻՆ - Է՛, չգիտե՛մ, Զաքեոս, տան տղամարդը դո՛ւ ես: Ոնց գիտես, էդպես էլ արա:

ԶԱՔԵՈՍ - Ա՛յ, ապրի արևդ: Դու էլ որ ինձ լսես ու հատկապես հաց դնելուց աղը չմոռանաս, էլ ի՞նչ դարդ:

ԿԻՆ - Վերջը քոնն ասի՞ր...

ԶԱՔԵՈՍ - Թե չէ, փո՛ղ, հա՛, փո՛ղ: Փողն ի՞նչ է, ձեռքի կեղտ, ենքա՛ն լցնեմ վրադ, որ ինչքան էլ լողանաս, կյանքում չմաքրվես էդ կեղտից (Ծիծաղում է):

ԿԻՆ - Է՛, Զաքեոս, կատակի հավես չունեմ...

ԶԱՔԵՈՍ - Դե լավ, հա՛, թեթև տար... Աստված վե՛րջը բարին անի: (Խոսքը փոխելով) Դու լավ կլինի ասես, թե կնանիք ի՞նչ են բամբասվում, ի՞նչ կա-չկա քաղաքում:

ԿԻՆ - Ես քեզ հարցնելու, դու ես ինձ հարցնո՞ւմ:

ԶԱՔԵՈՍ - Դե՛, էդ հարցում կնիկարմատի հետ ոտ երկարացնե՞լ կլինի:

ԿԻՆ - Չե՛, դու լեզվիդ տակ պահած բա՛ն ունես, Ձաքեռու:

ԶԱՔԵՈՍ - (խուսանալով): Ինչ ունեի, հացի հետ կերել-կուլ եմ տվել...

ԿԻՆ - Ի՛, ես հո քեզ լա՛վ եմ ճանաչում: Մի ասա տեսնեմ ընչի՞ ես անհանգիստ:

ԶԱՔԵՈՍ - (Լրջանալով): Ճիշտը որ ասեմ, հա՛, անհանգիստ եմ... Հիսուսի մասին հեչ բան լսած կա՞ս...

ԿԻՆ - Հիսուսը՞ քեզ ինչ...

ԶԱՔԵՈՍ - Հասկացի՛, ա՛յ կին, ես կողմ, էն կողմից բաներ են խոսում, թե էդ Հիսուսը՝ ինքը Մեսիա՛ն է...

ԿԻՆ - Քեզ համար մեկ չե՞:

ԶԱՔԵՈՍ - Իհա՛րկե, մեկ չէ: Մեսիան որ եղավ, ինքնաբերաբար կարգերը փոխվո՛ւմ են:

ԿԻՆ - Ինչու՞ են փոխվում:

ԶԱՔԵՈՍ - Դե՛, նոր թագավո՛ր: Բնականաբար նոր կյանք, նոր մարդիկ, նորից-նոր կաշա՛ռք, նորից-նոր «հախե՛ր»: Ու դեռ չհաշված, որ ինձ կարող են իմ գործից հանել ու իրենց մարդո՛ւն իմ տեղը խցկել:

ԿԻՆ - Վա՛յ, Ձաքեռու, վա՛յ... (Իբր հանգստացնելով նրան): Քո ասած Մե՛սիան, որ Հիսուս է կոչվում, թագավո՛ր չէ, է՛, այլ մի հասարակ, ինձ ու քեզ նման, դեռ մեզնից էլ վատ, մի ավարա մարդ:

ԶԱՔԵՈՍ - Ո՞նց թե ավարա...

ԿԻՆ - Հա՛, բա՛: Ասում են առանց նույնիսկ մի կոպեկ փող վերցնելու մարդիկ է բուժում ու ամբողջ ժամեր անոթի փորին քարոզնե՛ր անում:

ԶԱՔԵՈՍ - (Հետաքրքրված): Իսկ ի՞նչ է ասում:

ԿԻՆ - Ի՞նչ պիտի ասի: Աղքատի մեկն է, ու աղքատ մարդու խելքով է դատում: Նրան որ լսես, պիտի քո վերջին շապիկը հանես և ուրիշի՛ն տաս: Եսիմ շապիկ էլ ունի՞ իր հագին...

ԶԱՔԵՈՍ - Բա որ ասում ես էդքան աղքատ է, մարդկանց բուժելուց փող ինչո՞ւ չի՛ վերցնում:

ԿԻՆ - Ես ի՞նչ իմանամ...

ԶԱՔԵՈՍ - Չէ՛, կնիկ, էստեղ հաստատ մի բան կա՛:

ԿԻՆ - Հեչ բան էլ չկա՛: Դու գործի՛դ նայիր: Մեզ փո՛ղ է պետք, փո՛ղ:

ԶԱՔԵՈՍ - Հասկացա՛նք, հա, փող... փո՛ղ, հա, փո՛ղ, փո՛ղ, հա, փո՛ղ... (Կնոջը մոտը կանրելով, ցածրաձայն) Հլա մի ի՛նձ լսի: Մեր մոտ գիտե՞ս ինչեր են ասում: Թե իբր էդ Հիսուսը մաքսավորների ու հարուստ մարդկանց տնե՛րն է գնում, չնայած նրան, որ փարիսեցիք անպատի՛վ արարք են էդ քայլն համարում...

ԿԻՆ - Է՛, պարզ չե՞ ինչու: Եթե դու ասում ես, որ էդ Հիսուսը վաղը-մյուս օրը թագավո՛ր է դառնալու, ուրեմն շա՛հն է դրդապատճառը և գուցե արդեն պաշտոննե՛ր է բաժանում...

ԶԱՔԵՈՍ - Զգիտե՛մ, կնիկ, բան չե՛մ հասկանում: Թե մարդ է բուժում, էն էլ առանց փող, էլ ի՞նչ թագավոր: Թե թագավոր է՝ ինչու՞ է աղքատ... Ինչքան հասկացա նա բարի՛ մարդ է, բայց թե բարեսիրտ ո՛չ աղքատն է լինում, ոչ էլ մանավանդ թագավորները...

ԿԻՆ - Է՛, պարապ տեղը գլո՛ւվող ես ցավեցնում: Վե՛ր կաց, վե՛ր, քնի՛...

ԶԱՔԵՈՍ - Չէ՛, կնիկ, քունս իսկապես փախավ: Ես էդ Հիսուսին տեսնել եմ եմ ուզում:

ԿԻՆ - Է՛, շառից հեռո՛ւ... Աղքատից ի՞նչ խեր: Գործ չունե՛ս հետը:

ԶԱՔԵՈՍ - Էդ արդեն ի՛մ գործն է, հասկացա՞ր կնիկ: Դու չխառնվես...

ԿԻՆ - Այ՛ մարդ, փորձանք ե՞ս...

ԶԱՔԵՈՍ - (Կոպիտ): Քաշվի քրո՛ջդ: Ինձ չխանգարե՛ս:

ԿԻՆ - (Ուզում է գնալ, բայց ոտքը կախ է գցում): Հիմա ի՞նչ, չես քնո՞ւմ...

ԶԱՔԵՈՍ - Քեզ չասի՞ գնա: Բա՛ն եմ մտածում:

ԿԻՆ - (Քամահրանքով): Փողե՛րդ հաշվի, Ձաքեռս, փողե՛րդ...

ԶԱՔԵՈՍ - Դու դեռ էստեղ ե՞ս... (կինը դուրս է գալիս): Փողե՛րդ հաշվի, փողե՛րդ հաշվի...
Կրա՛կն եմ ընկել էս կնկա ձեռքին: Այ՛ մարդ, ինչ նստա էս գործի վրա՝ բոլորի աչք ու երեսից ընկա: Մեկը չե՛ս գտնի, հարուստ, թե աղքատ, որ նորմալ ժպտա, նորմալ բարևի, սրտաբաց խոսա: Ամեն ինչը կե՛ղծ, ամեն ինչը սո՛ւտ... Է՛, փող որ կա՞ ինչ՝ մարդկություն է չկա: Իրար խաբելով, օրենք չհարգելով, միմյան ո՞ւր, յարաբ... Հա՛, փողը արժե՛, որ շատ ունենաս, բայց մի ի՛նձ հարցրու, հեշտ է՞ աշխատել: Առանց կեղծիքի ու խարդախության, որտեղի՞ց շատ փող: Հարուստ մեկը կա՞, որ դույլերով է քրտինքը թափել ու փողեր դիզել: Չէ՛, դա սո՛ւտ է, սո՛ւտ: Օրինակ ե՛ս, էսքան փողեր շինելով ամբողջ տարվա մեջ գոնե մի՛ բաժակ քրտինք թափած կա՞մ: Չէ՛, դրա տեղակ արյունն աչքս առած մարդկանց ջանն ընկել ու էն գիշատիչ գազանի

նման հա՛կ ծոտում եմ, կաշին՝ պլոկում, համ փո՛ղը շորթում, համ էլ ապրանքը ձեռքերից խլում: Է՛, բայց ի՞նչ անեմ՝ կաշառք վերցնելն ու կաշառք տալը դարձել են արդեն ջուր խմելու պես բան: Ինչ կուզես արա՛, միայն ժամանակին «հախը» տե՛ղ հասցրու... Ա՛ն ու տո՛ւր, ա՛ն ու տուր: Հոգու առևտո՛ւր: Որ չգողանա՛նք, գոփե՛նք ու թալանենք, էլ փող որտեղի՞ց: Էսօրվա օրը բոլորս էլ գո՛ղ ենք, հարուստ, թե աղքատ, էն տարբերությա՛մբ, որ աղքատները գողանում են քի՛չ և իրարի՛ց, իսկ հարուստները՝ շատ ու բոլորի՛ց... Բոլո՛րն են կեղծավոր, գա՛ն են ձևանում, բայց որ առի՛թ տաս՝ գայլի պես կոշոշոտե՛ն: Մի՛ նայիր, որ տաճարում իրենց սրբերի նման համեստ են պահում, աղոթք են անում: Ճշմարիտ հավատ ոչ մեկն էլ չունի՛, ձևե՛ր են թափում, թե հետևում են Աստծո պատգամին: Բայց ի՛նչ հետևել: Գողանում էլ են, շնանում էլ են, աչքիդ մեջ նայելով սուտ երդում տալիս... Է՛, չե՛, վա՛տ է, վա՛տ: Գազա՛ն ենք դարձել: Իրար չե՛նք հարգում, մարդ սիրել չկա՛... Ամեն մարդ միայն ի՛ր մասին է մտածում: Էնքան ենք արդեն հեռացել Աստծուց, որ եթե, բա՛ն է, Մեսիան էլ հայտնվի, մե՛կ է, գեհենից մեզ պրծում չկա՛: Աղբակո՛ւյտ է, հա՛, երկիրը դարձել: Իսկական գեհեն: Փոխանակ աղբից երկիրը մաքրեն՝ ա՛ղբ են շաղ տալիս: Մենք էլ են սոված շների նման, հա՛ քջջում ենք էդ աղբը զարշափոտ, թե բա՛ն է, մի կրծած ոսկոր, կամ բորբոսնած հա՛ց հիմա կգտնենք, որ առնենք ու պո՛ւկ, մեր տունը տանենք, որ կնանիքը ավել կամ պակաս բաներ չխոսեն, որ երեխեքը մեր կերպը հարգեն, ծանոթ-բարեկամ նախանձո՛վ նայեն... Է՛, Զաքեոս, չե՛, փրկություն չկա՛: Ինչ էլ որ անես մե՛կ է, չի՛ լինի թեկուզ մեկը մարդկանցից, որ քեզ հետ իսկապես մարդո՛ւ պես վարվի, անշահախնդիր մի լավ բա՛ն անի, հարգի առանց վախ, սիրի առանց փող... Է՛, ինչքան խոսեմ, խոսելու նյութը չի՛ վերջանալու: Լավ կլնի գնամ, մի էդ Հիսուսին տեսնեմ թե ո՞վ է, որ էդքան գովում են, կամ էլ փնտվում... Հավատ չե՛մ տածում ես էդ լուրերին, թե առանց շահի մարդիկ է բուժում, լավություն անում, իսկ ինքն անոթի աղքատի մեկն է: Կամ չի՛ վախենում մաքսավորների տունը մտնելուց ու հաց կիսելուց: Փարիսեցիներն էն օրը կզցե՛ն, որ հարազատ մա՛յրն իսկ իրեն չճանաչի: Ի՞նչ է, առյուծի կաթո՞վ է սնվել մանուկ հասակում: Կամ թե, որ ասում են, գո՛ւթ ունի սրտում: Ա՛յ մարդ, էդ սրտով բա ո՞նց է ապրում: Բա մի ի՛նձ հարցրեք, թե բարի մարդ կա՞ աշխարհում: Կասեմ՝ հա՛, բայց երբ քնա՛ծ է: Հենց որ արթնացավ՝ շուտ թող ու փախի: Բա՛, կյա՛նք է, է՛, կյա՛նք, ա՛յ Հիսուս ախպեր, կռիվ տա՛լ է պետք... Լա՛վ, ճիշտ կլինի գնամ ի՛մ աչքով ամեն ինչ տեսնեմ: Ափսոս բոյս է կարճ, կողքովս անցնի, ինձ չի՛ նկատի: Ասում ես, էլի՛, էսքան փողի մեջ կարո՞ղ եմ թեկուզ երկու մատնաչափ բոյ ավելացնել: Զե՛, անտերը, չե՛: Աստված ինչ տվեց, դա՛ է մեր բախտը: Թե չէ փողը ի՞նչ, ձեռքի կե՛ղտ, ոչի՛նչ... (Գնում է):

ՏԵՍԱԴԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Երիբովի փողոցներից մեկը: Քաղաքացիների բազմություն, որ հետաքրքրասիրությամբ նայում է դեպի այն կողմը, որտեղից հայտնվելու է Հիսուսն իր առաքյալների հետ: Ձախ կողմում, նրանցից քիչ հեռու, երկու մուրացիկ կույրեր են նստած: Աջ կողմի վրա մի ժանտաթզենի է: Հայտնվում է Ջաքեոսը և փորձում մարդկանց միջով ճանապարհ հարթել իր համար:

ԶԱՔԵՈՍ - (Փութաջան): Տե՛ղ տվեք, տե՛ղ տվեք... (ինչ-որ մեկին): Է՛յ, ո՞ւմ եմ ասում, ճանապարհ տուր ինձ:

Ա ՔԱՂԱՔԱՅԻ - Իսկ դու մի՛ խցկվիր:

ԶԱՔԵՈՍ - (Զայրանալով): Էդ ո՞նց ես խոսում, անտաշի՛ մեկը: Չես տեսնո՞ւմ ով է դիմացդ կանգնած:

Ա ՔԱՂԱՔԱՅԻ - Տեսնո՞ւմ եմ, ինչո՞ւ չէ: Պճկված թզո՛ւկ, էլ չասենք ճաղա՛տ:

ԶԱՔԵՈՍ - (Կատաղած): Էդ ի՛նձ հետ ես, հա՞, ոջլոտի՛ մեկը: Քո դեմ Ջաքեո՛սն է, մաքսատան պե՛տը:

Բ ՔԱՂԱՔԱՅԻ - (Միջամտելով՝ թշնամաբար): Ճիշտն ասած, ախպեր, սա մաքսատուն չէ՛, դու էլ մեր պե՛տը, որ հրամայես: Թե տեսնել կուզես, ճարդ ի՛նքդ տես: Բայց լավ կլինի թողնես հեռանա, քանի այս կետդ, որ գետնի վրա՛ է, շուտով չի՛ իջել մյուս այն կեսիդ մոտ, որ գետնի տակն է...

ԶԱՔԵՈՍ - (Երեսը երկինք հառելով): Աստվա՛ծ իմ, տեսնում ես, չէ՞, թե էս անբարիշտ ու կոպիտ մարդիկ ինչեր են ասում...

Ա ՔԱՂԱՔԱՅԻ - Պա՛հ, հենց քեզ կպան՝ Աստված հիշեցի՞ր: Բա որ ամեն օր ու ամեն պահի դո՛ւ ես մեզ նման մարդկանց անպատվում, Աստված չի՞ տեսնում:

ԶԱՔԵՈՍ - (Ընկրկում է, բայց կատաղած է: Ինքն իրեն): Ա՛խ, թե մի հանկարծ ձեռքս կընկնեիք սահմանի վրա, ա՛յ էն ժամանակ նոր կխոսեինք: Յոթը տակ կաշի կքերթեի՛ ձեզ, նոր կիմանայիք թե Ջաքեոսն ով է ... Բայց թե ի՞նչ արած, էստեղ դուք շա՛տ եք... (Չորսը կողմը նայելով): Բա ի՞նչ անեմ, հը՞, ո՞նց տեսնեմ նրան... (Նկատելով ժանտաթզենին): Հա՛, գտա՛: Հենց էս թզենու վրա էլ կբարձրանամ: Բայց... ամոթ չէ՞, որ... Ի՞նչ կասեն հանկարծ իմ ծանոթները, եթե ինձ տեսնեն թզենու վրա: Պիտի ձեռք առնեն, թե տեսե՛ք, տեսե՛ք, Ջաքեոսը թառել է թզենու վրա ու թուխս է նստել... Է՛, ի՞նչ փույթ, թե ինչ կասեն, մեկ է, չարախոսելու առիթը միշտ կա՛: Իսկ, ա՛յ, Հիսուսին տեսնելու առիթը ձեռքից բաց չեմ թողնելու: Եթե այս մարդն իրոք նման չէ բոլորին, ուրեմն իսկապե՛ս Աստված է ուղարկել և փրկության հույս, ճի՛շտ է, շատ չնչին, բայց թերևս կա՛ ... (Բարձրանում է ժանտաթզենու վրա):

Քաղաքացիների մեջ աղմուկ է և իրարանցում: Մտնում են Հիսուսը և առաքյալները: Այդ պահին կույր մուրացիկները մեկը հարցում է անում մի քաղաքացու:

Ա ԿՈՒՅՐ - Այդ ո՞վ է անցնում, որ ժողովուրդը իրար խառնվեց:

Գ ՔԱՂԱՔԱՅԻ - Քեզ համար մեկ չէ՞, ցանցա՛ն մուրացիկ, չէ՞ որ դու կո՛ւյր ես, տեսնել չե՛ս կարող:

Բ ԿՈՒՅՐ - Հա՛, բայց փող խնդրել գոնե կարո՞ղ ենք:

Գ ՔԱՂԱՔԱՅԻ - Այո՛, ինչո՞ւ չէ: Բայց ձեր բախտն այսօր հաստա՛տ չբերեց: Այս մարդը հարուստ չէ՛, նա մե՛կ է նման:

Ա ԿՈՒՅՐ - Լա՛վ, բայց ո՞վ է նա, գոնե կասե՞ս մեզ:

Գ ՔԱՂԱՔԱՅԻ - Նազովրեցի՛ն է, Հիսո՛ւսը: Լսած կա՞ս իր մասին:

Ա ԿՈՒՅՐ - (Չէ, թե զարմացած): Ինչպե՞ս թե Հիսուսը...

Գ ՔԱՂԱՔԱՅԻ - Այո՛, հենց ինքը: Ինչո՞ւ զարմացար:

Ա ԿՈՒՅՐ - Ինչպե՞ս թե: Նա կարող է... մեր աչքե՛րը բուժել:

Գ ՔԱՂԱՔԱՅԻ - Տե՛ղդ վեր ընկի, ցանցառի մեկը ու փո՛ղդ մուրա: Քեզ պես զարշահոտ, ոջլոտ կենդանուն մարդ կմոտենա՞...

Բ ԿՈՒՅՐ - (Ա կույրին): Մի՛ լսիր նրան: Եկ բարձր ձայնով մենք աղաղակենք և խնդրենք Հիսուսին, որ ձե՛ռք մեկնի մեզ: Գուցե և լսի ու օգնությա՞ն գա...

Ա ԿՈՒՅՐ (Բ կույրին) - Դու հավատո՞ւմ ես, որ նա չի զզվի մեր թշվառ տեսքից:

Բ ԿՈՒՅՐ - Ի՞նչ խոսք: Նա բարի՛ է: Ես շատ եմ լսել, որ մեզնից առաջ մեր նման մերժված և լքված մարդկանց խղճահարվել է, բուժել ցավերից... (բարձրաձայն դիմելով Հիսուսին): Տե՛ր, որդի՛ Դավթի, գթա՛ մեզ, գթա՛...

ՀԻՍՈՒՍ - (Լսելով նրա ձայնը՝ կանգ է առնում, շրջվում դեպի նրանց և գնում նրանց մոտ): Ի՞նչ կուզեք, որ անեմ ձեզ համար:

Բ ԿՈՒՅՐ - Տե՛ր, մեր աչքերը թող բացվի՛ն:

ՀԻՍՈՒՍ - (Դիպչելով Բ կույրի աչքերին): Ուրեմն վերագտի՛ր տեսողությունդ: Հավատդ փրկե՛ց քեզ:

Բ ԿՈՒՅՐ - (Որի աչքերը բացվեցին: Ուրախությունից իրեն կորցրած): Օ՛, շնորհակալ եմ, Տե՛ր, ես տեսնո՛ւմ եմ, տեսնո՛ւմ...

Ա ԿՈՒՅՐ - Ի՛նձ էլ գթա, Տե՛ր... Օգնի՛ր ինձ տեսնել... (Հիսուսը բացում է նաև նրա՛ աչքերը): Աստվա՛ծ իմ... Ես տեսնո՛ւմ եմ... Ես տեսնում եմ քո լո՛ւյսը... Ես տեսնում եմ իմ Փրկչի՛ն...

Հիսուսն առանց խոսքի, հեզաբարո վեր է կենում և շարժվում առաջ:

ԶԱՔԵՈՍ - (Ծառի վրա, զարմացած նրանից, ինչ տեսել էր): Ա՛յ հրաշք... Նա բուժեց... Կույրերին բուժե՛ց... Նա հեզ գառան պես դրանց մոտեցավ, չխորշեց դիպչել այդ տականքներին, ում մազերը կեղտից ցեխագույն են դարձել... Ի՞նչ գթասիրտ մարդ, որ պատիվ արեց նույնիսկ ետնյալին... Իսկ ի՞նձ, իսկ մեղավորի՞ս, տեսնես ի՞նչ կասեր, ինչպե՞ս կվարվեր մեղքի ծովի մեջ խեղդվող մարդու հետ... Թե հետս խոսեց, ուրեմն, իրո՛ք էլ, Աստված ինձ չի մոռացել...

ՀԻՍՈՒՄ - (Հասնելով ժանտաթզենուն՝ դիմում է Զաքեոսին): Զաքեո՛ս, շտապիր իջնե՛լ այդտեղից, որովհետև հարկ է, որ քո՛ տանը գիշերեմ:

ԶԱՔԵՈՍ - Հեյնանի՛, Տե՛ր իմ... (Պատրաստակամ իջնում է ծառից և միանում Հիսուսին ուղեկցողներին):

Գ ՔԱՂԱՔԱՅԻ - (Դժգոհ Հիսուսի վարքից): Ինչու՞ եք ուտում և խմում մաքսավորների ու մեղավորների հետ:

ՀԻՍՈՒՄ - Առո՛ղջ մարդիկ չեն, որ պետք ունին բժշկի, այլ հիվանդնե՛րը: Ես չեկա՛ արդարներին կանչելու, այլ մեղավորներին ապաշխարությա՛ն:

Հիսուս, առաքյալները, Զաքեոսը և քաղաքացիներից ոմանք դուրս են ելնում բեմից:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Զաքեոսի տան հյուրասենյակը: Զաքեոսի կինը և քենին զբաղված են սեղան զցելով:

ԿԻՆԸ - (Ներվային): Բան չեմ հասկանում էդ մարդուց ես, չէ՛: Մի ժամ առաջ էր, ասաց. «Գնում եմ Հիսուսին տեսնեմ»: Հիմա էլ եկավ, թե՛ կնի՛կ, սեղա՛ն դիր, հյուրեր՝ են գալու: Էնպես էր խառնվել, իրարով անցել, ասես կյանքի մեջ էլ հյուր չէր տեսել: Հարցնում եմ՝ ո՞վ են, թե՛ քո գործը չէ՛: Լա՛վ, քանի՞ հոգի: Ասում է՝ քսա՛ն... Ցնդե՛լ է էդ մարդը:

ՔՈՒՅՐԸ - Բա ինքն ո՞ւր գնաց:

ԿԻՆԸ - Գինի բերելու: Էդքան փողն իզուր ջուրն ենք լցնելու, ինչ է թե մի քանի իր պես որկրամոլ ընկերների հետ կերուխում անի: Ախր ի՞նչ իմաստ...

ԶԱՔԵՈՍ - (Ուրախ-ուրախ ներս մտնելով): Չպրծա՞ք, այ կին: Դե շո՛ւտ, շո՛ւտ արեք: Հյուրերը շուտով մեր տուն են գալու:

ԿԻՆԸ - Մի հարցնող լինի՝ ինչո՞ւ ես էդպես իրարով անցել: Մեծ բան, էլի՛, հյո՛ւր...

ԶԱՔԵՈՍ - Չէ՛, մի՛ ասա, կին: Էս մի հյուրն ուրիշ է...

ԿԻՆԸ - Ո՞նց թե ուրիշ է: Թագավոր հո չէ՞:

ԶԱՔԵՈՍ - (Բազմանշանակ): Ավելի՛ մեծը...

ՔՈՒՅՐԸ - Մեղա՛, քեզ, մեղա՛: Մի՞թե Պիղատոսը...

ԶԱՔԵՈՍ - Իզուր մի՛ փնտրեք նրա անունը: Կգա՝ կտեսնեք:

ԿԻՆԸ - Բայց ախր ո՞վ է, որ դու քեզ Էդքան ուրախ ես զգում:

ԶԱՔԵՈՍ - Ուրախն էն խոսքը չէ: Շա՛տ ուրախ եմ, կի՛ն:

ԿԻՆԸ - (Տարակուսած): Բա՛ն չեմ հասկանում... (Մտորումների մեջ): Թող, որ գուշակեմ... Դու ո՞ւր գնացիր: Հիսուսի՞ն տեսնելու:

ԶԱՔԵՈՍ - Այո, ճիշտ այդպես...

ԿԻՆԸ - Բայց խրախճանքի գերի մտքերդ քեզ ուրի՞շ ճամփա մատնացույց արին:

ԶԱՔԵՈՍ - Չէ՛, անգին կինս, դու սխալվում ես: Ես հենց Հիսուսի ճամփին էլ եղա:

ՔՈՒՅՐԸ - (Հափշտակված): Դու տեսա՞ր նրան:

ԶԱՔԵՈՍ - Այո՛, ինքս անձամբ:

ՔՈՒՅՐԸ - Ինչպիսի՞ն էր նա:

ԶԱՔԵՈՍ - Ճիշտ այնպիսին էր, ինչ նրա մասին լսել էինք մենք:

ՔՈՒՅԴԸ - Բարի՞ էր...

ԶԱՔԵՈՍ - Բարի՛ :

ՔՈՒՅԴԸ - Գթասի՞րտ...

ԶԱՔԵՈՍ - Գթասի՛րտ:

ՔՈՒՅԴԸ - Ցավերը բուժո՞ղ:

ԶԱՔԵՈՍ - Եվ ո՛չ միայն դա: Պիտի տեսնեիք, թե ինչպես էր նա մարդկա՛նց հետ վարվում:

ՔՈՒՅԴԸ - Գոռո՞գ էր, ի՞նչ է...

ԶԱՔԵՈՍ - Բնա՛վ: Հեզ, ինչպես գառը: Պարզ երևում էր, որ սիրում է բոլորին: Հարուստ չէր, բայց բնավ աղքա՛տ էլ չէր երևում: Մեզ նմա՛ն մարդ էր, բայց միայն նմա՛ն: Մի բա՛ն կար նրա մեջ, որ տարբեր էր շատ մեզնից բոլորից: Ինչքա՛ն հասարակ, բայց բնավ նմա՛ն չէր հասարակ մարդու...

ԿԻՆԸ - (Կռպիտ) Լա՛վ, դա հասկացա՛նք: Իսկ հիմա ասա՛, թե քո սիրտն ինչո՞ւ այդպես լցվել է, որ որոշել ես առանց ավստասնքի քսակդ բացել...

ԶԱՔԵՈՍ - Հա՛, դու ճի՛շտ ես,կին, սիրտս լցվել է:

ԿԻՆԸ - (Քինոտ): Թույլ տուր նկատել՝ առաջին անգամ:

ԶԱՔԵՈՍ - Այո՛, առաջին: Եվ զիտե՞ս ինչու...

ԿԻՆԸ - Եվ ինչո՞ւ:

ԶԱՔԵՈՍ - Առաջին անգամ ինձ հյուր են գալիս առանց հրավեր, բաց սրտո՛վ, անշա՛հ: Գալիս են մարդո՛ւ տուն, ո՛չ մեղավորի, ո՛չ մաքսապետի: Առաջին անգամ իրենց գալուստով ինձ պիտի պատվեն որպես մի մարդո՛ւ, Աստծո էակի՛, արժան հարգանքի:

ՔՈՒՅԴԸ - Կներե՛ս, փեսա, բայց դու ոնց որ թե քարոզ ես անում...

ԿԻՆԸ - Հա՛, խփնվել է Հիսուսից հետո: Ասում էի, չէ՞, աղքատից ի՞նչ խեր...

ԶԱՔԵՈՍ - Հիմա՛ր ես կնիկ ու չես հասկանում, թե ինչ ձեռք բերի:

ԿԻՆԸ - Ախր ի՞նչ է, ի՞նչ: Կարասով ոսկի՞, բռով անգին քա՛ր...

ԶԱՔԵՈՍ - Արժանապատվությո՛ւն...

ԿԻՆ - (Զհավատալով լսածին): Ի՞նչ... ինչ ասի՞ր, մի կրկնի՛ր...

ԶԱՔԵՈՍ - Արժանապատվությո՛ւն...

ԿԻՆԸ - Ծիծաղս գալիս է: Չէ՛, լո՛ւրջ եմ ասում: Ախր ո՞վ է էդ կեղծավորը, որ համոզել է, թե հարգում է քեզ: Դու ի՞նչ հարգանքի արժանի մարդ ես, երբ տանդ գլխին անեծք է կախված, իսկ դռան դիմաց գամփռ մի շան պես արգելքն է նստած, որ հավատացյալ ոչ ոք չփորձի մեղավորիդ տան շեմից ներս անցնել:

ԶԱՔԵՈՍ - (Վճռական): Հիսո՛ւսը:

ՔՈՒՅԸ - (Սրտատրոփ): Հիսո՞ւսը...

ԿԻՆԸ - (Քրոջը) Ասեց՝ ո՞վ, չլսեցի...

ԶԱՔԵՈՍ – Հիսու՛սը, ասացի:

ԿԻՆԸ - Քեզ ի՞նչ է ասել:

ԶԱՔԵՈՍ – Ոչի՛նչ: Ուղղակի մարդո՛ւ տեղ դրեց:

ԿԻՆԸ - Դու, ի՞նչ է, մարդ չե՞ս...

ԶԱՔԵՈՍ – Նոր չէի՞ր ասում, թե մեղավոր եմ: Այո՛, ճի՛շտ էիր: Իսկ նա ամբոխի բողոքին ընդդեմ ի՛մ տուն է գալու: Ի՛մ, մեղավորի՛ս: Դու հասկանո՞ւմ ես...

ԿԻՆԸ - (Հիասթափ): Ինչպե՞ս, Հիսո՞ւսը... Այդ նա՞ է մեր հյուրը...

ԶԱՔԵՈՍ – Հենց ի՛նքը՝ Մեսիա՛ն:

ԿԻՆԸ – Չէ՛, էս մարդն հաստատ իսելքը թոցրե՛լ է: Դու նրա՞ համար ես էսքան փող ծախսում:

ԶԱՔԵՈՍ – Մոռացի՛ր փողը, անունն էլ չտա՛ս: Թող ինձ մա՛րդ զգամ: Լսո՞ւմ ես, ա՛յ կին: Թող ինձ մա՛րդ զգամ... (Դրսից աղմուկ է): Հա՛, եկա՛ն... Պրծե՛ք: Գինի՛ն էլ բերեք: Հա՛, չմոռանաք նաև ա՛ղ դնել:

Ներս են մտնում Հիսուսը և առաքյալները:

ՀԻՍՈՒՄ - Խաղաղությո՜ւն ձեր տանը:

ԶԱՔԵՈՍ - Բարո՛վ եք եկել: Ձեր ոտքը թող բարի՛ լինի իմ տան մեջ: Համեցե՛ք, նստե՛ք: Պատի՛վ արեք ինձ...

Հյուրերը տեղավորվում են:

ԿԻՆԸ - (Մոտենալով Զաքեոսին): Բա սա բա՞ն էր, հա՞, որ բերիր մեր գլխին:

ԶԱՔԵՈՍ - Դու ձենդ կտրի ու գործդ արա:

ԿԻՆԸ - Գիտե՞ս, իսկապե՛ս բան չեմ հասկանում: Ախր ո՞նց եղավ, որ եղպե՛ս, մեկի՛ց, ուրիշ մարդ դարձար...

ԶԱՔԵՈՍ – Ոչ թե ուրի՛շ մարդ, այլ հենց մա՛րդ դարձա: Ասում էիր, չե՞, որ շատ եմ քնում: Այո՛, ճի՛շտ էիր, ես մի ամբողջ կյանք քնած եմ ապրել, ու այն ամենը, ինչ կատարվել է՝ մղձավանջային երազ է թվում: Ու ես արթնացա: Ճիշտ կլնի ասել՝ իմ մեջ մա՛րդը արթնացավ:

ԿԻՆԸ - Ինձ որ սպանե՛ս էլ, բան չե՛մ հասկանում... Որ ասեմ կույր էիր ու աչքերդ բացեց, հա՛, էլի մի կերպ կհասկանայի...

ԶԱՔԵՈՍ - Հասկացի՛ր, նա հոգո՛ւ աչքերը բացեց: Իսկապե՛ս, հոգով ես կո՛ւյր եմ եղել: Հիմա ես նո՛ր եմ արժեքներ տեսնում կյանքի, մարդու մեջ և այն ամենի, ինչ մեր Տեր Աստված բարեսրտորեն տվել է մարդկանց: Մի րոտ հազար անգամ արա՛գ է խփում, երբ մտածում եմ, որ ես հենց մա՛րդ եմ, որ Աստված առանց նախապայմանի, իր Որդու միջոցով ընդունո՛ւմ է ինձ, որ սիրո՛ւմ է ինձ: Ես էլ, իմ հերթին, իրենց եմ սիրում, Աստծուն ու մարդկանց, բոլոր-բոլորին և ջանալու եմ Հիսուսին օգնել, ինչ էլ որ լինի: Այո՛, նա միակն էր, որ հասկացավ ինձ, հասկացավ իդձս փրկության տանող: Եվ ո՛չ միայն իմ: Հազար-հազարի՛...

ԿԻՆԸ - (Տխրամած): Է՛հ, չեմ հասկանում, թե ինչ կլինի, բայց որ կամքն Աստծո ամենագորն է, էլ չեմ կասկածում: (Լուռ հեռանում է):

ԶԱՔԵՈՍ - (Խանդավառ դառնալով դեպի հյուրերն ու հարգանքով դիմելով Հիսուսին): Տե՛ր, ահա իմ ինչքերի կեսը կտամ աղքատներին, և եթե որևէ մեկին զրկել եմ՝ քառապատիկը կհատուցեմ:

ՀԻՍՈՒՍԸ - (Տեղից բարձրանալով): Այսօր այս տան համար փրկություն՝ եղավ, քանի որ սա և՛ս Աբրահամի որդի է, որովհետև մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին: (Նստելով):

ԶԱՔԵՈՍ - (Երջանկացած դառնալով դեպի հանդիսատեսը): Հրա՛շք է, երբ հոգո՛ւ աչքերն են բացվում: Ես ի՞նչ էի կամ ո՞վ երեք ժամ առաջ՝ գծում մաքսավո՞ր, խարդա՞խ, խաբեբա՞, որ ջանք էր թափում մարդկանց կեղեքել սոսկ մի մոլությամբ՝ փո՛ղ դիզելու, փո՛ղ: Եվ մի ամբողջ կյանք ատե՛լ ուրիշին, ատելի՛ մնալ, նախանձե՛լ, կոպտե՛լ, թիրախ դառնալով նրա՛նց նախանձին: Զսիրե՛լ ոչինչ, ինչ նյութակա՛ն չէ, գանձը պահ տալով ժանգի խնամքին: Հարգել գեթ մեկի՛ն, որ գոնե մեկը քեզ «անարգ» չասի ու սրտի խորքում քեզ չհայեռի այն բանի համար, որ դու գոռո՛գ ես և ինքնահավա՛ն: Որ քեզնից բացի այլ բան չե՛ս տեսնում, որ Աստվա՛ծ չունես, որ ա՛յն, ինչ շինծու ցուցադրել ես իբրև թե արժե՛ք, իբրև թե հավա՛տք, լոկ

խաղացել էս, ջանալով քեզ պէս անհոգի մարդկանց մեջ հոգևոր թվալ: Ի՞նչ կյանք ես ապրել, որ քո կինն անգամ առողջության տեղ քո վաստակի՛ց է հարց ու փորձ անում, քե՛զ հետ չի քնում, այլ քո փողերի՛: Բա երեխե՛քդ, որոնց երեսը օրեր շարունակ դու չես էլ տեսնո՛ւմ, դու զբաղվա՛ծ ես խիստ, փողե՛ր ես դիզում, որ հետո դրանց մի չնչին մասով քո երեխեքի սիրտը կաշառե՛ս, որ քեզ որպէս հայր ընդունե՛ն, սիրե՛ն, գրողի ծո՛ցը, թե հոգով-մտքով՝ դատա՛րկ-տկա՛ր են... Երեք ժամ առաջ... Երբ հոգիս կո՛ւյր էր, երբ խարխափելով Հիսուսի՛ն եկա... Եվ հանդիպեցի՛... Եվ տեսա՛ նրան... Ու հավատացի, քանզի նա եկա՛վ, նա ընդունե՛ց ինձ... Նա ինձ ընդունեց առանց պայմանի՛... Ու փոխվե՛ց ամեն ինչ... Ու մա՛րդն արթնացավ... (Շրջվում է, որ գնա դեպի հյուրերը, բայց մի պահ հապաղում է: Հայացքով դառնալով դեպի հանդիսատեսը): Այնպե՛ս կուզեի մի բան իմանալ, թե ձեզնից մեկը իր կյանքում երբևէ հանդիպե՞լ է Հիսուսին... Կամ թե կուզենա՞ր...

,